ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԶՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

29. 11. 2017թ

N 116

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

Կից Ձեզ ենք ներկայացնում Զորագյուղ համայնքի ղեկավարի 24.11.2017թ-ի թիվ 19-Ա և 27.11.2017թ-ի թիվ 20-Ա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԶՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

24 նոյեմբերիի 2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 19 - Ա

ԶՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, որոշում եմ.

1. Զորագյուղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (1.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2017 թվականի դեկտեմբերի 27-ին ժամը 10.00 –ին անցկացնել մրցույթ:

2. Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:

3. Մրցութային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Բախշիկ Հարությունյանին :

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան

անուն ազգանուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-Ա 27.11.2017Թ

ԳՈՒԳԱՐՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Գուգարքի տարածքային սպառողական կոոպերատիվի դիմումը՝ սեփականության իրավունիքով Գուգարքի տարածքային սպառողական կոոպերատիվին պատկանող խանութի շենքի հողամասի հողահատկացման հիմքերի վերականգման մասին. ղեկավարվելով ՀՀ ՀՕ 118-րդ հոդվածի 6-րդ կետով և 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387- Ն որոշմամբ և հիմք ընդունելով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի N ԼԴ/3507/02/15 վճիռը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Գուգարքի տարածքային սպառողական կոոպերատիվին պատկանող, Ձորագյուղ համայնքի տարածքում գտնվող, անշարժ գույքի տակ գտնվող հողամասի հողահատկացման հիմքերը, Ձորագյուղ համայնքի կադաստրային քարտեզի 06-066-0009-009 ծածկագրի 119,94 քմ մակերեսով հողի նկատմամբ և հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային Օրենսգրքի 60-րդ հոդվածի հողերի կազմում՝ օրենքի ուժով սեփականության իրավունքով հատկացնել Գուգարքի տարածքային սպառողական կոոպերատիվին պահպանման և սպասարկման նպատակով ՀՀ Հողային Օրենսգրքի 64-րդ հոդվածի 9-րդ կետով:
2. Անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ գ. Ձորագյուղ 1-ին փողոց, 3-րդ շենք փոստային հասցեն:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները, ենթակա են պետական գրացման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:
4. Ուժը կորցրած ճանաչել Ձորագյուղ համայնքի ղեկավարի 09.06.2017 թ-ի <<Գուքարքի տարածքային սպառողական կոոպերատիվին սեփականության իրավունքով պատկանող շինության զբաղեցրած հողամասի հողահատկացման հիմքերը վերականգնելու մասին>> թիվ 08 որոշումը:

Համայնքի ղեկավար՝ Ս. Հարությունյան